

առաքելից են համարում, որ եօթանասնից մէկն է և ոչ իսկական առաքել, այդ անունը ռուսերէն թարգմանութեան մէջ ՕՒՄԱ է գրուած, իսկ փակագծում ենթադրած է Թոմմա (ΘΟΜΑ ?). որ հարկաւ սխալ է: Առանձին ուսումնասիրութեան, նիւթ են վաւերացնելու ըստ իրենց պատմական և աշխարհագրական բովանդակութեան, բայց այդ մի ուրիշ առիթի թողնելով՝ վերջացնում ենք մեր զեկուցումը, խորհուրդ տալով ամեն մի հայ պատմութեամբ հետաքրքրուողի ձեռք բերել այս գիրքն ու մերձաւոր անցնելի յիշատակների հետ ծանօթանալ:

Ն. ԹԱՐԱՄԵԱՆ

ՀԱՄԱՌՈՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՏՕՆԻՑ ԵՒ ԺԷՍԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ՌԻՂԱ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Աշխ. Խորէն ա. քահ. Փէհլիվանեան. Կ. Պոլիս 1898.

Ով հետևել է մեր սլարբերական թերթերին, անշուշտ լայտնի կլինի նորան, որ վերջին մի քանի տարում հեղինակ լինելու մի առանձին ցանկութիւն է նկատուում ոմանց մեր կովկասեան քահանաների մէջ և դա թէպէտև լիջեցնում է մեզ մեր բազմատանջ պատմահօր անմահ խօսքերը

«աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել. յառաջ քան զտեսութիւնն աստուածաբանք» սակայն և այնպէս մի թարում էր մեզ այն համոզմունքը, թէ պարապելու ձգտումը, ուսման հոգին սկսել էր արդէն պահանջ դառնալ նոցա համար, որոնց կոչումը նոյն իսկ ուսում և գիտութիւն տարածելն է:

Այդ նորաբոյս հեղինակները չունենալով կարևոր պաշար ու պատրաստութիւն իրենց առաջացրած նպատակն իրագործելու համար՝ յաճախ վերցնում էին այս

և այն անձանց երկասիրութիւնները և որպէս թէ լա-
րեփոխելով, յաճախ աղճատելով՝ այն և երբեմն էլ ամ-
բողջ թերթեր արտագրելով՝ հրատարակում էին ուրիշ
անուան տակ իրրև ինքնուրոյն աշխատութիւններ, ա-
ռանց լիշերու թէ գէթ մասամբ օգտուել են իսկական
հեղինակից, որ անշուշտ երկար օրեր քրտնաջան աշ-
խատանք է գործ դրել իւր աշխատութիւնը գլուխ
բերելու համար:

Այդ տեսակ անխիղճ հեղինակներին մերկացնելու
առիթներ ունեցել ենք մենք քանի մի անգամ «Արձա-
գանք»ի էջերում:

Ասենք թէ նոր բան չէ արտագրութիւններով գըր-
քել հրատարակելը՝ նոյն իսկ ոչ-հոգեւորականների հա-
մար՝ ի միջի ալլոց մի օրինակ. —

Յայտնի է, որ տասնևմէկ տարուց ի վեր մենք
սկսել ենք հրատարակել առաջին հայերէն պատի օրա-
ցոյցը հայերի մէջ, զարգարելով նորան մեր պատմու-
թեան և գրականութեան վերաբերեալ ժամանակագրու-
թեան մի հարուստ ժողովածուով, որը հաւաքելու վե-
րայ գործ ենք դրել երկար տարիներ: Թէ ո՞ր աստի-
ճան դժուար է այս կամ այն պատմական դէպքի, կամ
որևէ ազգային գործչի, ծննդեան կամ մահուան և կամ
նոյն իսկ հայ թերթի սկզբնաւորութեան ճիշտ թուա-
կանն ու օրը գտնել, այդ կարող է իմանալ ամեն մէ-
կը, ով որ երբ և իցէ փորձել է ժամանակագրական
աղիւսակ կազմել. թէ քանի՜ հարիւր նամակներով դի-
մել ենք այդ ժամանակագրութիւնը կազմելիս զանազան
տեղեր տեղեկութիւններ խնդրելու և կամ քանի՜ հա-
րիւր գրքեր ենք թերթել, ի միջի ալլոց և գրչագիր
մատեաններ, դորա մասին մի գաղափար կազմել ուզո-
ղին կիւնդրէինք ինքն իրեն մի հարց տալ, թէ ո՞ր
թուին, ամսին եւ ո՞ր օրն է պատահել մեր պատմու-

Թիւնից վերցրած այս կամ այն դէպքը, որոնք և ապա մի հաշիւ տալ իւր կատարած աշխատութեան մասին թէ ո՞րչափ էր լաջողած այդ իրանք:

Կարող ենք հաւատացնել, որ այնքան ժամանակում, որ մենք գործ ենք դրել այդ ժամանակագրութիւնը կազմելու վերայ, ինչքան էլ նա թերութիւններ և ուղղելիքներ ունենար, կարելի էր մի երկու ստուար աշխատութիւններ արտագրել:

Հապա ի՞նչ կասէք այն անձին, որ ինքը պատրաստութիւն չունենալով գրականութեամբ պարագելու և ձեռնարկելով նման մի հրատարակութեան, բառացի արտատպում է լիշեալ ժամանակագրութիւնը գրեթէ ամբողջապէս, առանց ուր և է լիշելու այդ մասին. ի՞նչ կասէք դարձեալ այն հոգևորականին, որ իւր «Ոսկէ բարեկամ» հրատարակութեան մէջ արտատպել է նոյնը առանց աղբիւրը լիշելու:

Ուշագրութեան արժանի է այն հանգամանքը, որ երկուսն էլ արտատպել են մեր արած ակամայ սխալներով և նոյն իսկ կրկնել մի սխալ, որ մենք արել ենք դիտմամբ:

Ուրիշ շատ տեղեկութիւնների հետ երկար ժամանակ է որոնում ենք և Ամեն. Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոսի ծննդեան տարին և օրը. քրքրել ենք Տրփ. խիսի կոնսիստորիայում գտնուած Թովուզ գիւղի ծնընդական մատեանները, հարցրել ենք նորա գալոցական ընկերներին և մտերիմներին, վերջապէս դիմել ենք անձամբ իրան՝ սակայն ոչ մի տեղից բաւարարութիւն չստանալով և իբրև մեր երբեմնեան ուսուցիչ՝ մօտաւորապէս լալտնի լինելով մեզ սրբազանի տարիքը՝ 1898 թ. պատի օրացուցի մէջ դրել էինք նորա ծնունդը 1834 թուին: Այնուհետև մի ուրիշ աղբիւրից տեղեկացանք սրբազանի ծննդեան ճիշտ տարին, որ է 1836

Թիւր, Թէպէտ և ամիսն ու օրը դարձեալ անորոշ։
Եւ երևակայեցէք, որ այդ սխալն էլ արտատպուած է նոյնութեամբ։

Այս բոլորը մենք զանցառութեան պիտի տայինք, եթէ նոյնանման մի նոր և աւելի տգեղ ձեռնարկութիւն դրուած չը լինէր մեր առաջ այս վարկեմիս։ Բանից երևում է, որ հեղինակ լինելու ախտը ոչ թէ միայն ուսաստանցի հայ քահանաների մէջ է բնակաւել, այլ սկսել է վարակել նաև մեր Թիւրքահայ եղբայրներին...

Յօդուածիս ճակատին դրուած վերնագրով գրքովիը խօսքիս լաւագոյն պատգոյցը կարող է համարուիլ։

Տփլիսի Ներսիսեան Հոգևոր Դպրոցում դասախօսելով Հայոց եկեղեցու աստուածաշտութեան կարգը՝ աւանդածս նիւթը հարկ եղաւ առանձին գրքովիով ի լոյս ընծայել իբրև ձեռնարկ, որպէս զի աշակերտներին ազատէինք արտագրելու դժուարութիւնից։ Այդ դասագիրքը կազմելիս օգտուել եմ ի հարկէ զանազան հիւն և նոր երկասիրութիւններից, որոց անուններն էլ յականէ յիշել գրքի սկզբում։

Հայր Փեհլիվանեանին հաճելի է եղել նման մի ձեռնարկ պատրաստել Տաճկաստանի բազմաթիւ հայ դպրոցների համար. ով է ասում, գովելի ցանկութիւն. բայց արի՛ տես որ շատ կամ քիչ փոփոխութիւններով, յետ ու առաջ դասաւորութեամբ և մասնաւոր լաւելումներով՝ մեր յիշեալ գրքովին ամբողջովին հիւսուել է այդ աշխատասիրութեան մէջ, առանց սակայն գէթ հարևանցի յիշատակելու, թէ օգտուած է մեր կամ որ և է այլ հրատարակութիւնից։

Եթէ չվախենայինք ընթերցողին ձանձրութիւն պատճառելուց՝ երկու գրքովին էլ մեծամասնութեամբ պէտք է արտագրէինք այստեղ, մարդկանց անբարե-

խղճութեան մասին մի գաղափար տալու համար. կը ներէ սակայն ընթերցողը, եթէ բաւականանանք քանի մի օրինակով միայն, որոնք իսկ բաւական են մեր ասածի ճշմարտութիւնը հաստատել:

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ս. գիրք, որից կարդացուած են՝ հին կտակարանից նշանաւոր դէպքերը... իսկ նոր կտակարանից չորս աւետարանը լիովին, գործք առաքելոցը և առաքելական թըղթերը:

Օրհնութիւն կամ հոգևոր երգ գիշերային ժամուն երգուած ենք այն խորհրդով, որ ինչպէս Մովսէս մարգարէն Խորայէլեան ազգը ազատելով Փարաւոնի ծառայութիւնից և անապատը հանելով՝ Աստծուն օրհնութեան երգ երգեց, այսպէս էլ հաւատացեալ ժողովուրդը Յիսուսի միջոցով ազատուելով անմարմին Փարաւոնի կամ խաւարի իշխանութիւնից՝ երգուած է նոյնանման օրհնութիւններ և երգեր:

առաւօտեան աղօթքը ուղղուած ենք Աստուածորդուն և Յիսուսի յարութեան խորհուրդն ունի, որովհետև այդ ժամին երևեցաւ նա իւղաբեր կանանց և լցրեց նոցա խըն-

ՏՕՆԻ ԵՒ ԺԷՍԻ

ս. գրոց ընթերցմունք են հին կտակարանից այն մասերն, որոնք Մեսիային մարդեղութիւնն և անոր կատարելիք փրկագործ աւօրէնութիւնները կահնարկեն: Իսկ նոր կտակարանէն չորս աւետարանք, գործք առաքելոց և առաքելական թղթերը:

... կը սկսուի օրհնութեան աւուր պատշաճի շարականը: Ինչպէս Մովսէս և որդիք իսրայէլի երգեցին ճօրհնեցուք զտէր, զի փառօք է փառաւորեալը՝ նոյնպէս բրիստոնէական եկեղեցին ի ձեռն Յիսուսի անմարմին փարաւոնի սատանայի ծառայութեանէն ազատուելուն համար կերգէ օրհնութեան շարական:

առաւօտեան ժամու պաշտումն որ կը մատուցուի Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, ունի կենսաբեր յարութեան խորհուրդը՝ Երբ երևեցաւ նա իւղաբեր կա-

դուրեմամբ, ուստի և մենք առաւօտեան աղօթքի սկզբում իբրեւ նշան ուրախութեան ասում ենք հետեւեալ սաղմոսը. «յոյս առաւօտու և այլն»:

Սուրբ Աստուածը երբեք անգամ ասելուց յետոյ միջնորդ ենք ձգում նորա մօտ ս. Աստուածածնին, ասելով «փառաւորեալ» երգը, որ ասել է Թովմաս առաքեալը:

Արարչական երգը գրել է մեր նշանաւոր հայրապետ ս. Ներսէս Շնորհալին ԺԲ դարում և Աստուծոյ վեցօրեայ արարչագործութեան պատմութիւնն է ներկայացնում, որով մենք յիշում ենք նորա ամենակարողութիւնը:

Այսպէս էլ համեմատիր 71 երեսը — 25 երեսի հետ, 26=73, 27=75, 31=82, և այլն և այլն: Գրեթէ նոյն են ըստ բովանդակութեան և ըստ դասաւորութեան երկու գրքի մէջ 'էլ' խաչակնքելը, ծնրադրել, երկրպագել, խունկ ծխել, օրհնել խաչիւ և աւետարանաւ, թափոր, նախատօնակ, հսկումն և այլն և այլն:

նանց, և լցուց զանոնք հոգեւոր ցնծութեամբ: Ուստի ի սկզբան առաւօտեան ժամուէն յետ տէրունական աղօթից կըսուի այս մաղթանքը. «յոյս առաւօտու... և այլն»:

Երեքսրբեան երգին յարակից է «փառաւորեալ և օրհնեալ միշտ ս. կոյս» զայս ըստ ամանգութեան յօրինած է Թովմաս առաքեալ, որով մեզ միջնորդ կունենանք զս. կոյսն Մարիամ Աստուածածին:

Կըսուի Ներսիսի շնորհաւոյ հեղինակած երգը. որ Աստուածային արարչութեան պատմութիւնն է... և յիշելով անոր նախախնամութիւնն ու ամենակարողութիւնը՝ կը մատուցանեմք պէս պէս հայցումսներ:

ԳԻԻՑ Ա. ՔԱՆ. ԱՂԱՆԵԱՆՑ

